

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԲԱՅԱՆԴՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ,ՌԵԼԻԵՏԸ,ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
5. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ,ԿՐԹԱԿԱՆ,ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎՍՊՈՐՏԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
6. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՍԱԿԱՆ ԵՎ ԿՈՍՏՈՒՆԻԿԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ
7. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ
8. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
9. ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
10. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
11. ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԾՐԱԳՐԵՐԻ ,ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ
12. ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Բայանդուր համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը /այսուհետև ՀԶԾ/ մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից մշակված և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից 2014 թվականին հավանության արժանացած «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» ուղեցույցի մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Բայանդուրի համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Այն մշակվել է՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և համայնքի ղեկավարին կից գործող տարեկան բյուջեի ու ՀԶԾ-ի մշակման խորհրդակցական մարմնի (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն ներկայացնում է Բայանդուր համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀԶԾ-ն Բայանդուրի համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Բայանդուրի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶԾ-ն մշակելիս ուսումնասիրվել են նաև Բայանդուրի նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման միտումները և դրանց շարունակականության հավանականությունը:

2. ԱՇԽԱՆՆԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱԸԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բայանդուր գյուղը ծովի մակարդակից բարձր է՝ 1539 մ :Նախքին անունը եղել է Միրիլու, հետագայում,երբ Բայանդուր Իշխանը իջևանել է գյուղ,գյուղի անունը վերանվանվել է Իշխանի անունով՝ Բայանդուր:Բայանդուրը հայտնի է 1853թ. Ռուս Թուրքական ճակատամարտով,որում ռուսական զորքերը գեներալ Օրբելիանի հրամանատարությամբ և տեղի բնակչության հետ համատեղ պայքարեցին թուրքերի դեմ և քջեցին Ախուրյան գետի աջ ափից մոտ 4 կմ դեպի Արևմուտք:Բայանդուրցիների հերոսական ոգին արտահայտվեց նաև Համաշխարհային 2-րդ պատերազմի ժամանակ,երբ Բայանդուրցի Արամայիս Պողոսյանը դարձավ Սովետական Միության հեռու:Բայանդուր գյուղը որպես բնակատեղի հայտնի է շատ վաղուց դրա վառ ապացույցն է տարածքում գտնված սեպագիր արձանագրությունները:

Բայանդուրի դպրոցը ունի ավելի քան 100 տարվա պատմություն:Կառուցվել է Նիկոլայ 2-րդ ցարի հրամանով:Հին գյուղը եղել է հենց Ախուրյան գետի ափին,որը սակայն ավերվել է 1926թ.երկրաշարժից:

Ներկայումս Բայանդուրն ունի հիմնովին վերանորոգված դպրոց,որը կրում է Արցախյան ազատամարտում զոհված Սամվել Հարությունյանի անունը և կից գործող նախակրթարան:

Բայանդուրը զարգացած մշակույթային համայնք է ,Բայանդուր գյուղով է անցնում Գյումրի-արմավիք ճանապարհը և հանրապետական երկաթուղին:

Հաշվի առնելով գյուղի սահմանամերձ լինելու հանգամանքը ուրախացնող է վերջին երկու տարվա ընթացքում ատագաղթի նվազումը և երիտասարդների հայրենի գյուղում մնալու և աշխատելու մտադրությունը:Նկատելի է ծնելիության աճ:

3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բայանդուրի համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 815 մարդ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Համայնքի բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը
1.	Բայանդուր	724 մարդ	182 տ/տ.	180 տ/տ.

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 815 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 385 և կանայք՝ 430: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.01.2017 թ. դրությամբ)**

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	815
	Տղամարդիկ	385
	Կանայք	430
	0-4 տարեկան	49
	5-6 տարեկան	13
	7-10 տարեկան	21
	11-14 տարեկան	31
	15-17 տարեկան	26
	18-22 տարեկան	45
	23-45 տարեկան	320
	46-62 տարեկան	240
	63 և բարձր տարիքի	70
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	70
	Տարիքային և աշխատանքային	
3.	Փախստականներ	0
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	4
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	1
7.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	13
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	29
	Մանկուց հաշմանդամներ	0
9.	Աշխատունակներ	290
10.	Զբաղվածներ	491
11.	Գործազուրկներ	200
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	20
14.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	1
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝	15
16.	Անօթևան ընտանիքներ	0

17.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	30
18.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	70
19.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	81

4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Բայանդուրի համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 5 անդամներով: Բայանդուրի համայնքի աշխատակազմը բաղկացած է 7 աշխատակցից:

Համայնքապետարանը տեղակայված է գ. Բայանդուր 8-րդ փողոցի 6-րդ շենքում : Շենքի ընդհանուր վիճակը վատ է, աշխատակազմի համար առանձնացված սենյակներում պայմանները լավ են, կահավորանքը նորացված է: Համայնքապետարանը հազեցած է տեխնիկայով: Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 20 որոշմամբ (աղյուսակ 4):

Աղյուսակ 3. Բայանդուրի համայնքապետարանի աշխատակազմը

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մասով ևս ծածկագիրը)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
1.	Համայնքի ղեկավար	1	1	220000
2.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	141000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
3	Աշխատակազմի քարտուղար (1.2-1)	1	1	149000
4	Գլխավոր մասնագետ-ֆինանսիստ (2.3-1)	1	1	147000
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
5	Համակարգչային օպերատոր	1	1	115000
6	գրադարանավար	1	1	73000
7	Մշակույթի տան տնօրեն	1	1	78000
8	հավաքարար	1	1	73000
	Ընդամենը			996000

Աղյուսակ 4. Բայանդուր համայնքի ավագանու անդամներ

h/h	Անուն, ազգանուն, հայրանուն	Ծննդյան տարեթիվը	Կրթությունը
1	Արզումանյան Խաժակ Կոյրունի	1959թ.	Միջն.Մասնագիտական
2	Բաղդասարյան Անդրիկ Աշոտի	1952թ.	Միջնակարգ
3	Դավթյան Մնացական Դավիթի	1995թ.	Թերի բարձրագույն
4	Սմբատյան Խորեն Արշակի	1986թ.	բարձրագույն
5	Չախոյան Ջիվան Գագիկի	1986թ.	Միջնակարգ

5. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցի անցկացումը իրականացվել է 2010 թվականին: Համայնքի լուսավորությունն առաջնային կարևորության հարցերից է և անհրաժեշտ է ընդլայնել լուսավորության ցանցը:

Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը: Համայնքը սնուցող ջրագծով համայնք է մտնում վայրկյանում 1,3լիտր խմելու ջուր, որն օրական կազմում է մոտ հարյուր հազար լիտր:2009թվականին համայնքում կատարվել է ջրամատակարարման համակարգի մասնակի վերանորոգում :Ընդհանուր առմամբ համայնքի կոմունիկացիոն կառույցներն ունեն 30-40 տարվա վաղեմություն և կարիք ունեն կապիտալ վերջանորոգման:Անհրաժեշտ է կատարել փողոցների նորոգում ,ջրատար առուների բետոնալցում,ջրահեռացման ապահովում , հեղեղատարների մաքրում:Համայնքը չունի կոմունիկացիոն համակարգ:

Աղյուսակ 5. Համայնքի կոմունիկացիոն կառույցների նկարագիրը

h/h	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Կատարման ընդհանուր թիվը	Ենթակա վերանորոգման
1	Կամուրջներ Գյումրի խճուղի Երկաթ գիծ	Հատ Հատ Հատ	4 2 2		
2	Ներհամայնքային ճանապարհներ	գծմ	12000	1979	6000
3	Խմելու ջրի ներքին ցանց	գծմ	8000	1970	8000
4	Ոռոգման ներտնտեսային ցանց	գծմ	10000	1970	10000
5	Ֆիքսված հեռախոսակապ	հատ	20	2010	

Համայնքում բնակելի տները հիմնականում առանձնատներ են, որոնց թիվը կազմում է 165:

Բայանդուրի համայնքում բնակֆոնդի վիճակը, ընդհանուր առմամբ, գնահատվում է բավարար:

Աղյուսակ 6. Համայնքի բազմաբնակարան բնակելի շենքերի և բնակելի առանձնատների թիվը

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Բազմաբնակարան բնակելի շենքերի		Բնակելի առանձնատների	
		թիվը	բնակարանների թիվը	թիվը	ընդհանուր մակերեսը
1.	Բայանդուր	0	0.	165	մոտ 1680 քմ

6. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1143 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 754 հա, որից վարելահող՝ 545,84 արտոներ՝ 168,29 այլ հողեր՝ 40,77, բնակավայրերի հողերը՝ 58,86 հա, արտադրական նշանակության հողերը՝ 168,02 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 43,44 հա, հատուկ պահպանության հողերը՝ 1,64, հա, ջրային հողերը՝ 26,08 հա: Քաղաքացիների սեփականության հողերը՝ 578,68 հա է, հատուկ նշանակության հողեր՝ 6,14 հա, համայնքի սեփականություն հանդիսացող հողեր՝ 401,97 հա է, պետական սեփականության հողերը՝ 35,42 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ համայնքի բնակավայրերում սեփականաշնորհված հողերի մեկ հողաբաժնի չափը 1,8 հա է:

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի և կարտոֆիլ: Սակայն հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Բայանդուրի համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքաբնակները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսություններ չկան: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսությունն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում: Համայնքաբնակները իրենց տնամերձ հաղամասերում աճեցնում են բանջարաբոստանային կուլտուրաներ: Ոռոգվում է համայնքի ոռոգելի տարածքի ընդամենը 10 %-ը՝ մեխանիկական համակարգի միջոցով: Ոռոգելի տարածքի 90 %-ը չի ոռոգվում ոռոգման ցանցի անմխիթար վիճակի պատճառով:

8. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բայանդուրի համայնքի ճանապարհները հիմնականում գրունտային են, որոնք էլ լինելով թեքությունների վրա, հաճախակի տեղացող հորդառատ անձրևների պատճառով ամբողջովին քայքայվում են և որոշ տեղերում դառնում դժվարանանցանելի: Համայնքի տարածքում ճանապարհներից ասֆալտապատ է միայն Գյումրի-Բայանդուր ավտոմայրուղին: Համայնքում գործում է միջհամայնքային տրանսպորտ:

Համայնքում տեղադրված են միկրոավտոբուսային 4 կանգառներ:

9. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Բայանդուրի համայնքում գործում է միջնակարգ 1 դպրոց: Համայնքի դպրոցի մասնաշենքը կառուցվել է 1920 թվականին և նախատեսված է 100 աշխակերտի համար: 2008 թվականին շենքի մասնաշենքը հիմնանորոգվեց պետական միջոցներով, որը

դպրոցին էր հատկացրել մոտ 105 միլիոն դրամ:Նույն տարում դպրոցին կից բացվեց նախակրթարան: Դպրոցն ունի 70 աշխակերտ և 15 ուսուցիչ:Դպրոցի շենքն ապահովված է խմելու ջրով, և կոյուղիով::

Աղյուսակ 7. Բայանդուր համայնքի հանրակրթական դպրոցի ցուցանիշները

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնքում
1.	Դպրոցներում աշխատողների թիվը, որից՝ Մանկավարժներ	20 18
2.	Աշակերտների թիվը	70
3.	ԲՈՒՀ-երում աշխատողների թիվը	0
4.	ԲՈՒՀ-եր հաճախող երեխաների թիվը	20
5.	Երաժշտական դպրոցում աշխատողների թիվը	0
6.	Երաժշտական դպրոց հաճախող երեխաների թիվը	3

10.ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքը հարուստ չէ մշակութային օջախներով:Ունի մշակույթի տուն, որը չի գործում,իսկ շենքը գտնվում է վթարային վիճակում: Շենքում տեղակայված է նաև գրադարանը: Համայնքի գրադարանային ֆոնդը հարուստ է բազմաժանր գրականությամբ:Կա շուրջ 4000 հազար կտոր գիրք,իսկ համալրումը շարունակվում է ամեն տարի:

2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՄՊՈՐՏ

Բայանդուրի ԲՄԿ-ն հանդիսանում է Ախուրյանի առողջության կենտրոնի ստորաբաժանումներից մեկը և առաջնային պահպանման ծառայություններ է մատուցում ազգաբնակչությանը: Գյուղական ԲՄԿ-ն տեղակայված է համայնքի դպրոցաներձ տարածքում: Շիրակի մարզպետարանի աջակցությամբ 2006 թվականին ԲՄԿ-ն ընդգրկվեց ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող ԱԱՊԲ ծրագրում,վերանորոգվեց և կահավորվեց: Բուժկետում աշխատում է 1 բուժքույր:Ներդրված է ընտանեկան բժշկի համակարգ:Ժամանակին իրականացվում են մանկահասակ երեխաների պարտադիր բուժ. միջոցառումներ:Ամենօրյա հսկողության տակ են գտնվում նորածին երեխանրը:

3. ԲՆԱԿԻԶՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը՝ www.bayandur.shirak@mta.gov.am որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում

տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար լինելուց և անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Համայնքապետարանում տեղադրված է տեղեկատվական ցուցատախտակ, որի միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի և ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

Համայնքի ավագանին.

- ✓ 16.05.2016թ. N 11-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»
- ✓ 16.05.2016թ. N 9-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»
- ✓ 16.05.2016թ. N 10-Ն որոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:

Ավագանին 22.12.2016թ. N 33 որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման, քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտային հարցերի, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության և սպորտի հարցերով խորհրդակցական մարմնի (ԽՄ) կազմը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

1. Ոռոգման համակարգի անբավարար վիճակ
2. Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ
3. Գյուղմթերքների իրացման դժվարություններ
4. Աղբահանության ոլորտում մատուցվող ծառայությունների բացակայություն
5. Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն
6. Մշակույթի տան շենքային և գույքային անբավարար պայմաններ
7. Ոռոգման ջրի ցանցի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն
8. Ներբնակավայրային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ
9. Փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՀՎ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի աշխարհագրական դիրքը

Պահուստային հողերը

Սեփականաշնորհված հողերի հողաբաժնի չափը

Համայնքում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների թիվը

գյուղտեխնիկային բավարար քանակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ինժիներական ցանցի, ճանապարհային որոշ մասի անմխիթար վիճակը բնակարանային շինարարությունը կանգնած է, կան կիսակառույցներ երաժշտական և գեղարվեստի դպրոցի բացակայությունը համայնքը գազաֆիկացված չէ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ստեղծում
Փոքր ֆերմերային տնտեսությունների ստեղծումը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝
Գործազրկության մակարդակի աճը
Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում
Մշակութային կյանքի իսպառ վերացումը
Բնակչության աղքատացումը

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի շարունակական զարգացումը ապահովելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ

Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերին և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը

Մերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն** են՝

Բարեկարգել Հայրենական Մեծ պատերազմում զոհված համագյուղացիների հիշատակին կառուցված հուշարձանի տարածքը

Ունենալ բարեկարգ ներհամայնքային ճանապարհներ

Անցկացնել փողոցային լուսավորություն

Բարելավել մշակույթի տան շենքային և գույքային պայմանները

Ցանկապատել գերեզմանոցները

Կատարել ծառատնկումներ

Կառուցել սպորտհրապարակ

Տեղադրել ևս 2 հակակարկտակայաններ

Կազմակերպել կանոնավոր աղբահանություն

Կատարել համայնքի Մատուռի նորոգման և տարածքի բարեկարգման
աշխատանքներ

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՆՎԱԾ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԻՇՍԱԿԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հուշարձանի տարածքն ամբողջությամբ պետք է մաքրվի, կատարվի ծառատնկումներ, սալիկապատվի հետիոտն մասը և եզրամայթերը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրականացումը նպատակ է հետապնդում վերականգնել և բարեկարգել ՀՊՄ հիշատակին կառուցված հուշարձանի կից տարածքը 22 զմմ եզրամայթերով և 12 քմ տարածքի սալարկումով: Հնարավորին դարձնել ամենամյա բացօթյա միջոցառումների կազմակերպումը հենց հուշարձանի տարածքում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրի իրականացման անհրաժեշտ ֆինանսական միջոցները /համաձայն կատարված չափազորումների, հաշվարկած շինանյութի և աշխատուժի/ գնահատվում են 1 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի կատարման ժամկետ սահմանվում է 2017թվականը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացնողն ու վերահսկողն համայնքապետարանի աշխատակազմն է՝ համայնքի ղեկավարի անմիջական հսկողության ներքո:

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքը կունենա վերանորոգված և խնամված հուշարձան, ինչն էլ կավելացնի հետաքրքրությունը բնակչության շրջանում և կավելացնի այցելուների թիվը:

ԾՐԱԳԻՐ 2

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ հատվածներում ներհամայնքային ճանապարհները վերածվել են ջրատար առուների, առանձին տեղերում ճանապարհներն հատելով լայնությամբ՝ դրանք դարձրելով անանցանելի: Ծրագրով նախատեսվում է բարեկարգել ներհամայնքային 2500քմ մակերեսով ճանապարհ/ճանապարհների տաշտակների վերանորոգում, ջրանցման տաշտակի, ջրանցման խողովակների տեղադրում, ճանապարհների խճալցում, ավազալցում, ճանապարհների հարթեցում/:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է նորոգել ու բարեկարգել ներհամայնքային ճանապարհներ, որի իրագործման համար անհրաժեշտ է լուծում տալ մի քանի խնդիրների՝

1. Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր
2. 2018-2020թթ. համայնքային բյուջեով ֆինանսական ներդրումներ նախատեսել ծրագրի իրականացման համար
3. Խճալցել, ավազալցնել ճանապարհներ և հարթեցնել

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական չափագրման ու հաշվարկի արդյունքում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում է 2 մլն դրամ, որից համայնքային ներդրումը 2019 թվականին պետք է կազմի 400000 դրամ, իսկ 2020 թվականին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Նախատեսվում է մեկ փողոց խճալցնել 2019 թվականին, իսկ 2020 թվականին ևս մեկ փողոց:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծումն ու աշխատանքների կազմակերպումն իրականացնելու համայնքապետարանի աշխատակազմը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Տրանսպորտի բոլոր տեսակների համար կապահովվի երթևեկության բավարար պայմաններ տարվա բոլոր եղանակների համար:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՅՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվում է համայնքի փողոցների լուսավորության ավելացում 20-ով, որոնք եղած 25 կետերի հետ կապահովեն համայնքի ամբողջական լուսավորությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է համայնքում գիշերային ժամերին ունենալ անհրաժեշտ փողոցային լուսավորություն: Ծրագրի կատարման համար լուծում են պահանջում հետևյալ խնդիրները՝

1. Էլեկտրասյունների վրայով անցկացնել առանձին լուսավորություն
2. Մոնտաժել լուսավորության լամպերն ու տեղադրել ավտոմատ անջատիչներ ու ժամային հաշվիչներ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի արժողությունը 1 մլն դրամ է, որն իրականացվելու է համայնքի բյուջեից:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրն իրականացվելու է 2017 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակների ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացման պատասխանատուն հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմը՝ համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի փողոցները կդառնան լուսավոր, հետիոտնի և վարորդների համար կատեղծվի գիշերային ժամերին ազատ տեղաշարժվելու հնարավորություն :

ԾՐԱԳԻՐ 4

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվում է հիմնանորոգել մշակույթի տունը, մասնավորապես կտուրը: Կատարել ներքին հարդարման աշխատանքներն ապահովվել անհրաժեշտ գույքով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է շինությունը դարձնել բարեկարգ և բնակչության կողմից օգտագործվող: Մշակույթի տունը պետք է ծառայեցնել իր նպատակին, կազմակերպել ազատ ժամանց, միջոցառումներ: Հնարավորություն ստեղծել տարբեր խմբակների գործունեության համար: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1. Վերանորոգել շենքի տանիքը
2. Տեղադրել դռներ և պատուհաններ
3. Կատարել ներքին հարդարում/պաստառապատում, ներկում, հատակի նորոգում, ջեռուցման անցկացում/
4. Մշակույթի տունն ապահովել գույքով

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի նախնական հաշվարկի, չափազրման և իրականացման համար ֆինանսական միջոցերը գնահատվում են շուրջ 15 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրականացման ժամկետն է 2020 թվականը: Ծրագիրը նախատեսվում է իրագործել պետության կողմից նախատեսվող ծրագրերով և դոնոր կազմակերպությունների օգնությամբ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման պատասխանատուն համայնքի ղեկավարի աշխատակազմն է, համայնքի ղեկավարի անմիջական ղեկավարությամբ:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքում նորմալ կգործի գրադարան, Մշակույթի տունը վերանորոգումից ու գույքով ապահովվելուց հետո լիարժեք կծառայի իր նպատակին և միանգամից 40-50 մարդ հնարավորություն կունենան այնտեղ զբաղվել և անցկացնել ազատ ժամանակը:

:

ԾՐԱԳԻՐ 5

ԾԱՌԱՏՆԿՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսվում է տարեկան 100 դեկորատիվ և մրգատու ծառերի տնկում կանաչ գոտիներում, դպրոցամերձ տարածքում, ճամփեզբերին և ՀՄՊ հուշարձանի տարածքում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ավելացնել կանաչ գոտիների տարածքը, հիմնել նոր դաշտապաշտպան անտառագոտիներ: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծելի դարձնել հետևյալ խնդիրները՝

1. Համայնքապետարանի միջոցներով ձեռք բերել տարեկան 100 տնկի
2. Նախատեսել ծառատունկի գոտիներ
3. Օգտագործել համայնքի աշխատուժը հասարարական աշխատանքի կարգով՝ նպատակ ունենալով ապահով համայնքի էկոլոգիական մաքրությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում է 750 հազար դրամ 5 տարվա համար:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրն իրականացվելու է յուրաքանչյուր զարուն՝ շարունակական:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացնելու պատասխանատվությունը դրվում է համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ղեկավարի վրա:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայքը կունենա կանաչապատ տարածք և էկոլոգիապես մաքուր բնություն:

ԾՐԱԳԻՐ 6

ՍՊՈՐՏԸՐԱՊԱՐԱԿԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում կառուցել սպորտհրապարակ, որտեղ տեղակայված կլինի սպորտային տարբեր մարզական գույք՝ համայնքի երեխաների և պատանիների ֆիզիկական զարգացումն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է համայնքի պատանիների շրջանում ավելացնել հետաքրքրությունը դեպի սպորտ և նպաստել ֆիզիկական առողջ զարգացմանը: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է առանձնացված տարածքում տեղադրել սպորտային տարբեր գործիքներ:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում է 1 միլիոն դրամ: Համայնքը ծրագիրն իրականացնելու է 2017թվականին համայնքի բյուջեի և դոնոր կազմակերպությունների միջոցով: Համայնքի ներդրումը կկազմի շուրջ 200000 դրամ: Գումարի մնացած մասը կներդնի դոնոր կազմակերպությունը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրն իրականացվելու է 2017թվականի ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացնելու պատասխանատվությունը դրվում է համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ղեկավարի վրա:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա սպորտհրապարակ, առավել կռփված պատանիներ :Կմեծանա հետաքրքրությունը դեպի սպորտը:

ԾՐԱԳԻՐ 7

ԲՆԱԿԱՎԱՅԻ ՄԱՔՐՈՒՄ, ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նասխատեսվում է ամենօրյա ուշադրություն համայնքի շրջակայքի և ներհամայնքային փողոցների մաքրությանը, հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված աղբահանություն:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ է հետապնդում համայնքում ունենալ`

Սանիտարական ապահով վիճակ

Մաքուր փողոցներ

Չաղտոտված շրջակա միջավայր

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է`

1. Հատկապես գարնան ամիսներին կազմակերպել կենտրոնացված

աղբահանություն: Տեխնիկայի վարձակալությունը և դիզ. վառելիքի ապահովումը

համայնքապետարանի կկատարվի միջոցներով:

2. Կազմակերպել լրացուցիչ միջոցառումներ համայնքի մաքրությունն ապահովելու համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները գնահատվում են տարեկան 300000 դրամ` համայնքային բյուջեի միջոցներից:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նասխատեսվում է իրականացնել 2017-2020 թվականների ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման պատասխանատուն հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա մաքուր համայնք:

ԾՐԱԳԻՐ 8

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՏՈՒՌԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսվում է Մատուռի վերանորոգում և տարածքի բարեկարգում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պահպանել պատմա-մշակութային արժեքները: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են՝

Մատուռի ներքին հարդարում և տարածքի ցանկապատում, հողի շերտի ավելացում:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար պահանջվում է 500 000 դրամ: Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ են ներդրումներ, իսկ որոշ աշխատանքներ կկատարվի համայնքի բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2021 թվականների ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման պատասխանատուն հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքը կունենա մաքուր համայնք:

Աղյուսակ 8. ԾՐԱԳՐԻ ԱՍՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	ընդամենը	Նախատեսվող ֆինանսական միջոցներն ըստ տարիների/վն դրամ					Համայնքային բյուջե	Այլ միջոցներ
			2017	2018	2019	2020	2021		
1	ՀՊՄ գոհված համապետության հիշատակին կառուցված հուշարձանի մաքրում	1,0	1,0					1,0	
2	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	2,0		0,5	0,5	0,5	0,5	2,0	
3	Համայնքի փողոցների գիշերային լուսավորության անցկացում	1,0	0,3	0,3		0,4		1,0	
4	Մշակույթի տան շենքային և գույքային պայմանների բարելավում	15			6	7	2	2	13
5	Ծառատնկում	0,75	0,15	0,15	0,15	0,15	0,15	0,75	
6	Սպորտհրապարակի կառուցում	1,0	0,5		0,5			0,5	0,5
8	Կանգառների տեղադրում	1,0			1,0			1,0	
7	Բնակավայրի մաքրում, սանիտարական վիճակի բարելավում, աղահանություն	0,3						0,3	
8	Համայնքի մատուրի վերանորոգում	0,5						0,5	

ՀԶԾ-ի վերանայումը

Հիմնվելով ՀԶԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀԶԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀԶԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀԶԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀԶԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

ՀԶԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀԶԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: ՀԶԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀԶԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀԶԾ-ի ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀԶԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

